Կ Ա Ր Ծ Ի Ք

ՍՅՈՒԶԱՆՆԱ ԱՐՄԵՆԻ ՊԵՏՐՈՍՅԱՆԻ <<ՆՈՐ ՄԵՏԱՔՍԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ>> ԹԵՄԱՅՈՎ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ, ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ Ը.00.02 <<ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՆՐԱ ՈԼՈՐՏՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ>> ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Տնտեսական համակարգի բնականոն գործունեության ապահովման և երկրի զարգացման առումով չափազանց կարևոր նշանակություն ունի տրանսպորտային և հաղորդակցության ուղիների առկայությունը և դրանց արդյունավետ շահագործումը: Զարգացման ներկա փուլում նշված խնդիրների լուծումը ձեռք է բերել չափազանց մեծ կարևորություն՝ պայմանավորելով երկրի զարգացման հեռանկարները: Հատկապես Հայաստանի Հանրապետությունում, որն ունի սահմանափակ հաղորդակցության ուղիներ, այդ խնդիրն առավել է կարևորվում և պահանջում լուծման արդյունավետ մոտեցումների կիրառում: Այս համատեքստում, հանրապետության համար կարևոր նշանակություն ունի միջազգային տրանսպորտային միջանցքներին ակտիվ ներգրավվածությունը և դրա հետ կապված խնդիրների լուծումը: Ակնհայտ է, որ արդյունավետ կերպով գործող տրանսպորտային համակարգը կարող է ապահովել երկրի համար տնտեսական և սոցիալական մեծ օգուտներ՝ նպաստելով երկրի կայուն տնտեսական զարգացմանը, ինչպես նաև ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորմանը: Նշված խնդիրների և դրանց լուծման ուղիների բացահայտմանն է նվիրված աշխատանքը, որով էլ պայմանավորված է դրա ***հրատապությունն ու արդիականությունը:***

Ատենախոսության ***կառուցվածքը*** հնարավորություն է ընձեռել բացահայտել հետազոտվող հիմնահարցի բնութագրական կողմերը, ապահովել դրանցով պայմանավորված խնդիրների լուծման հաջորդականությունը, պահպանել առաջարկված մոտեցումների գործնական նշանակության

հիմնավորմանը և ամբողջական հետազոտության իրականացմանը հատուկ այլ սկզբունքները:

Աշխատանքի ներածական մասում դրված է հետազոտության նպատակը և տրված են դրան հասնելու համար լուծման ենթակա խնդիրները, Այստեղ բնութագրված են տեսական ու մեթոդական այն հիմքերը, որոնց վրա կառուցված են հեղինակի մշակումներն ու եզրահանգումները:

Ատենախոսության ***առաջին՝ «Տրանսպորտի ոլորտի առաջանցիկ զարգացումը որպես երկրի տնտեսության զարգացման գործոն» գլխում*** ներկայացվել են մասնագիտական գրականության մեջ դիտարկվող հիմնահարցի վերաբերյալ առկա տեսական մոտեցումները, ուսումնասիրվել է տրանսպորտի ոլորտի էությունը և գնահատվել է վերջինիս դերը երկրի տնտեսական զարգացման գործում:

Հետազոտության ***երկրորդ՝ «Միջազգային տարանցիկ ուղիների (միջանցքների) զարգացումը որպես երկրի տնտեսության զարգացման ուղղություն» գլխում*** վերլուծության է ենթարկվել միջազգային տրանսպորտային միջանցքների կառավարման համակարգի և ՀՀ տարանցիկ տրանսպորտային ուղիների գործունեությունը:

Աշխատանքի ***երրորդ՝ «Նոր մետաքսի ճանապարհը և միջազգային տարանցիկ ուղիներին ՀՀ մասնակցության տնտեսական նպատակահարմարության գնահատումը» գլխում*** կատարվել է <<Նոր մետաքսի ճանապարհի>> հետ փոխկապակցված գործող և ձևավորվող այլընտրանքային տարանցիկ ուղիների վերլուծություն, հիմնավորել է ՀՀ-ի դրանց մասնակցության տնտեսական նպատակահարմարությունը:

Հետազոտության արդյունքների ***հավաստիությունը*** պայմանավորված է այն հանգամանքով, որ աշխատանքում մշակված մոտեցումները և արված առաջարկությունները հիմնված են քննարկվող հիմնահարցը ուսումնասիրող հայտնի մասնագետների աշխատությունների վրա, իսկ որպես տեղեկատվական հիմք ծառայել են այդ բնագավառին վերաբերող պաշտոնական և

վիճակագրական նյութերն ու տվյալները: Ատենախոսությունում օգտագործված են վերլուծության ժամանակակից մեթոդներ, որոնք, ակնհայտորեն, բարձրացրել են ստացված արդյունքների հավաստիության աստիճանը:

Աշխատության ***գիտական նորույթը*** կայանում է նրանում, որ առաջարկվել են ՀՀ միջազգային տարանցիկ տրանսպորտային ուղիների զարգացման հիմնական մոտեցումները, գնահատվել է այլընտրանքային տրանսպորտային ուղիներին ՀՀ մասնակցության տնտեսական կարևորությունը, մշակվել է <<Հարավ-Արևմուտք>> տրանսպորտային միջանցքը ձևավորող հնարավոր այլընտրանքային ուղիների կազմը, հիմնավորվել է <<Իրան-Հայաստան-Վրաստան-ԵՄ երկրներ>> տարանցիկ երկաթուղային տրանսպորտային ուղու տնտեսական նպատակահարմարությունը:

Հեղինակի կողմից մշակված մեթոդաբանական ու մեթոդական մոտեցումներն, արված առաջարկություններն ու ընդհանրացումներն ունեն ***տեսական և գործնական*** նշանակություն: Դրանք կարող են լայնորեն օգտագործվել հանրապետությունում տնտեսական զարգացմանն ուղղված ծրագրերի մշակման ընթացքում: Հետազոտության արդյունքների գիտագործնական կիրառության շրջանակները բավականին լայն են և ուշադրության արժանի:

Ատենախոսությունը զերծ չէ ***դիտողություններից***, որոնցից հատկանշական են հետևյալները.

1. Ատենախոսությունում հեղինակն իր վերլուծությունների արդյունքում մի շարք ուղղություններով գնահատել է Հայաստանի Հանրապետության համար տարբեր տրանսպորտային ուղիների տնտեսական նպատակահարմարությունը: Միևնույն ժամանակ, աշխատանքում համակողմանիորեն ներկայացված չէ <<տնտեսական նպատակահարմարություն>> հասկացության բովանդակությունն ու դրա գնահատման հիմնական չափորոշիչներն ու ցուցանիշները:
2. Միջազգային տարանցիկ, ինչպես նաև այլընտրանքային տրանսպորտային ուղիներին ՀՀ մասնակցությունը, ի թիվս օգուտների, ստեղծում է մի շարք

քաղաքական և տնտեսական ռիսկեր, որոնց արդյունավետ կառավարման դեպքում միայն կարելի է ակնկալել ցանկալի արդյունքներ: Կարծում ենք, ատենախոսությունում հեղինակն առավել խորությամբ պետք է անդրադատնար այս խնդրին և դրա հնարավոր լուծումներին:

3. Միջազգային տրանսպորտային ուղիներին և միջանցքներին ՀՀ ներգրավվածությունն, անշուշտ, կնպաստի արտաքին տնտեսական կապերի զարգացմանը և արտաքին առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը: Միևնույն ժամանակ, այն կարող է լուրջ խնդիրներ և դժվարություններ ստեղծել ներքին շուկայի և հայրենական արտադրության համար, որոնց չեզոքացմանը նվիրված ուսումնասիրությունները աշխատանքում աչքի չեն ընկնում իրենց խորությամբ:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արված դիտողությունները չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: Դրանք հետապնդում են միջազգային տրանսպորտային հաղորդակցության համակարգի զարգացման հիմնահարցերին նվիրված հետագա ուսումնասիրությունների ուղղությունների բացահայտման նպատակ:

Ս. Պետրոսյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն, ամբողջական և արժեքավոր հետազոտություն, որում դրված և լուծված են հանրապետության համար կարևոր ու արդիական խնդիրներ:

Հեղինակի մասնագիտական ու վերլուծական մակարդակն, ակնհայտորեն, բարձր է, ինչի մասին են վկայում ինչպես ատենախոսությունը, այնպես էլ դրանում ստացված արդյունքները: Աշխատանքում մշակված առաջարկությունները և կատարված եզրահանգումները կարող են լայնորեն օգտագործվել միջազգային տրանսպորտային զարգացման ծրագրերի իրականացման ընթացքում:

Հետազոտության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի կարևորագույն դրույթներն ու արդյունքները:

Ընդհանուր առմամբ, Ս. Պետրոսյանի «Նոր մետաքսի ճանապարհը և Հայաստանի միջազգային տրանսպորտային միջանցքների զարգացման խնդիրները» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետության գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ դրա հեղինակն արժանի է Ը.00.02 «Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍ«
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր **Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆ**

29.11.2024

Պարոն Վ. ԲՈՍՏԱՆՋՅԱՆԻ
ստորագրությունը հաստատում եմ՝
Բ. Գ. Թ.
ԵՊՀ գիտական քարտուղար **Մ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

29.11.2024թ.